ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 28-ին կայացավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, որի կազմում ընդգրկված էին ՀՀ ԳԱԱ 66 իսկական անդամներ (ակադեմիկոսներ), 62 թղթակից անդամներ և ՀՀ ԳԱԱ գիտական հաստատությունների և կազմակերպությունների 41 լիազոր ներկայացուցիչներ: Ժողովին մասնակցում էր 151 մարդ:

Համաձայն կանոնադրության՝ ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրվեցին թեկնածուներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արմեն Գալոյանը առաջադրեց գործող նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սուրեն Մխիթարյանը առաջադրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի թեկնածությունը:

Այնուհետև առաջադրված թեկնածուները ժողովի մասնակիցներին ներկայացրին գործունեության իրենց ծրագրերը: Բազմաթիվ ելույթներից հետո ժողովը անցավ քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով գործող նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ստացավ ձայների մեծամասնությունը՝ 102 կողմ, իսկ Լենսեր Աղալովյանը՝ 34 կողմ:

Ընդհանուր առմամբ՝ երկու թեկնածուներին դեմ քվեարկեցին 7 ընտրող, 8 քվեաթերթիկ ճանաչվեց անվավեր:

Այսպիսով՝ հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ վերընտրվեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Այնուհետև ՀՀ ԳԱԱ նորընտիր նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց գործող փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանի, իսկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնի համար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանի թեկնածությունները: Փակ (գաղտնի) քվեարկությամբ, համապատասխանաբար ստանալով 118 և 115 ձայն՝ Յուրի Շուքուրյանը *և* Հրանտ Մաթևոսյանը *ընտրվեցին առաջադրված պաշտոններում:*

Հունիսի 29-ին ավարտվեցին ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունները: Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Առաքելյանը*: Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Յուրի Չիլինգարյանը*: Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Վիլեն Հակոբյանը*: Քիմիական և Երկրի մասին իտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի*

ինստիտուտի տնօրեն Լևոն Թավադյանը*: Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ - ԳԱԱ ակադեմիկոս* Յուրի Սուվարյանը*:*

Նորընտիր ակադեմիկոս քարտուղարները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը*, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ* Յուրի Շուքուրյանը *և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար* Հրանտ Մաթևոսյանը *ի պաշտոնե ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմի մեջ: ՀՀ ԳԱԱ նախագահության ազատ անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ* Լենսեր Աղալովյանը, Էդուարդ Ղազարյանը, Վանիկ Զաքարյանը, Կառլեն Ադամյանը*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Արամ Պապոյանը*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Գևորգ Պողոսյանը*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Արամ Սիմոնյանը*:*

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը գոհունակություն հայտնեց այն միասնականության համար, որը ցուցաբերվեց ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունների ժամանակ և վստահություն հայտնեց, որ նման միասնականություն կցուցաբերվի նաև գիտության զարգացման ծրագրերի իրականացման, հասարակության կյանքում ակադեմիայի և գիտնականի դերի ամրապնդման գործում:

5-ամյա արդյունավետ աշխատանքի համար ՀՀ ԳԱԱ նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին, հատկապես նրանց, ովքեր չընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Համբարձումյանին, Վլադիմիր Բարխուդարյանին, Ադոլֆ Մանթաշյանին, Արամ Շահինյանին, Ռոբերտ Աթոյանին:

«Գիտություն», հունիս, № 6, 2011 թ.